ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2025 թվականի № 186-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին մասի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի № 1599-Ն որոշումը և *Արմենուհի Ասատրյանի՝* 2025 թվականի մայիսի 22-ի № 45 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Արմենուհի Ասատրյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից հինգ աշխատանքային օր՝ 2025 թվականի մայիսի 27-ից հունիսի 3-ը ներառյալ:

2. ***Արմենուհի Ասատրյանին*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ ***Գայանե Բալայանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի մայիսի 26
ք. Հրազդան